

կը զատուի , կենդանւոյն վնաս չիտար : Տօպրակը առնելէն ետև նայէ որ կենդանին միջոց ունենայ վրայէն յարդ ուտելու , վասն զի շատ յոզնած ըլլալով՝ կ'ըլլայ որ յարդ չկերած քնանայ , դուն ալ առտուն ուշադրութիւն չկրնալով ընել ջուր կուտաս , որ գարիին վրայէն խմելով կը վնասուի . ուրիշը որ իր կենդանւոյն կանուխ գարի տայ նէ , քուձիդ զատէ քովին , կամ բուռ մը գարի ցանէ յարդին վրայ , որ ակնիտ կամ աշխայ՝ ըլլայ : Վատերը իրենց կենդանին ակնիտ ըլլալու համար՝ որոշած են , ուր որ իջնան ամէն իրիկուն՝ կենդանւոյն աչքերը և ականջները ձեռքով ուժով մը աճըռելով կը չփեն :

Կենդանւոյն սանձը առնես նէ՝ զատ կախէ , ուրիշի սանձին հետ մի կախեր , մի գացուներ . վասն զի աս սանձերէն ալ կենդանիները պլըշտըկող հիւանդութիւններ կ'աւնեն . նոյնպէս ալ տօպրակը , ծածկոյթը . քերոցը զատ ըրէ , չգիտցած կենդանւոյդ դացընել մի տար : Իս բաներուս աղէկ ուշադրութիւն ընես նէ՝ կենդանիդ շատ հիւանդութիւններէ ազատ , առողջ ու ժիր կը մնայ , ձամբորդութիւնդ ալ հանգիստ կ'ըլլայ :

Քանի մը ձի և բեռնակիր գրաստ ունիս , կ'ուզես որ իրարու ընտանի ըլլան , այսինքն մէկտեղ արծին և իրարմէ ալ զզատուին . քիչ մը ատեն ասանկ ըրէ . կերակրին տօպրակը փոփոխ տուր՝ մէյմը մէկուն մէյմը մէկալին : Ձիերը որ կուրտին և մէկմէկու հետ աւրուին , երբոր չես կրնար զատել ասանկ ըրէ . ձանկով չոր աղը կամ հող առ՝ գլխունուն նետէ , կը զատուին :

Երբեմն կ'ըլլայ որ կենդանին քանի մը օր գոցուած կը թողուն անհոգութք ու ջուր տուած չեն ըլլար . ասանկը ջուրի տանիս նէ , սաստիկ ծարուած ըլլալով՝ անյագ կերպով ջուր կը խմէ . որով կը ձաթի : Իսանկը պէտք է որ քանի մը կաթիլ ջուր բերանը առնելուն պէս՝ դլուխը քաշես , ու երբեմն երբեմն թողուս . առջի բերանը քիչ քիչ ջուր

խմէ , և շատ ալ ջուր պէտք չէ տալ : Ձին կամ ջորին արօտի կապես նէ , օր ընդ մէջ իրեք անգամ աս գեղս ըրէ . հաւկըթին մէջը պարպէ , կՃեպին մէջը զիհիի խէժ՝ լեցուր , և անամկ կը լելտուր . վեց օրը իրեք անգամ աս ընես նէ , կենդանւոյն շատ տկարութիւն ները կ'անցընէ , արիւնը կը մաքրէ , մազերը կ'աղուրցընէ , և ասկէ ետև թող որ շատ արածի :

Ձիուն կէս օխա գինի խմցընես նէ , յօժարութեամբ ձամբայ կ'ընէ . բայց չկը ուտած ձիուն խմցընես նէ , շատ կը խխնջայ , հեծողին ալ նեղութիւն կուտայ . այսպիսւոյն խնծոր մը տուր ուտելու , կը կակըղնայ : Պլղտիկուց կը ուտած ձին շատ չմեծնար , միայն կը լայն նայ՝ ուռածի պէս . կատաղի եղող էշը չգիրնար . խոչոր էշերն ալ խարդախ կ'ըլլան ու դարն՝ ի վեր չեն կրնար ելել :

Իս քուռակը որ լեռը եւրիւներուն քովը մեծցած է՝ առջի ձմեռը բերես ախոռը կապես նէ , կը նիհարնայ . բայց երկրորդ տարին երբոր կը սորվի , ջրին կերակրին վարժի նէ՝ կը սկսի լաւ սընունդ առնել : Իսոր համար կ'ըսուի տաճկերէն . Իլլ ալլրան՝ նալլապան , չէչ ալլրան՝ նանդրադան :

Պ . Պ

ՕԳՏԱԿԱՐ ԳԻՒՏ

Վըպոտած գոհաբները ² հադրել :

ԼԱԿՈՒՆ վրձին մը սապոնջրի մէջ թաթիւէ , անով թեթե կերպով մը գոհարներուն վրայէն անցիր , մէկ երկու վայրկեան զանոնք ջրին մէջ թող , ու հանէ կրակին քովը դիր որ չորնայ . ետքը քիչ մը հաց այրէ , փոշի ըրէ ու անով գոհարները շփէ :

1 Ալլրան՝ գոհաբներ :

2 Ճէլան՝ իր :